

## Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ք. Երևան, ք. Աշտարակ

14.04.2026 թ.

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (այսուհետ՝ օրենք) և ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն (խմբ. 28.12.23 N 2343-Ն) որոշմամբ հաստատված հավելվածի՝ 2026 թվականի ապրիլի 14-ին՝ ժամը 11:30-ին, Երևանի Աջափնյակ համայնքի վարչական ղեկավարի նստավայրում և 14:30-ին, Արագածոտնի մարզպետի նստավայրում տեղի ունեցավ «ՆՍԹ արքիթեքչուր ստուդիո» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված՝ Ակադեմիական քաղաքի ռազմավարական էկոլոգիական գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային լսում:

Բացման խոսքով հանդես եկավ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ Քրիստինե Հարությունյանը: Նա նշեց, որ «Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» նախարարության պատվերով «ՆՍԹ արքիթեքչուր ստուդիո» ՍՊԸ-ն կազմել է Ակադեմիական քաղաքի գլխավոր հատակագիծը և քանի որ այն հանդիսանում է հիմնադրությին փաստաթուղթ, ապա անհրաժեշտ է իրականացնել ռազմավարական էկոլոգիական գնահատում (ՌԷԳ) և փորձաքննություն: «ՆՍԹ արքիթեքչուր ստուդիո» ՍՊԸ-ն գլխավոր հատակագծի նախագիծը և ՌԷԳ հաշվետվությունը ներկայացրել է շրջակա միջավայրի նախարարություն փորձաքննություն իրականացնելու նպատակով: Հարությունյանը նշեց, որ փորձաքննության գործընթացն իրականացվում է օրենքով սահմանված կարգով, ներկայացրեց փորձաքննության գործընթացը, նշեց, որ փորձաքննության գործընթացին մասնակցել են պետական կառավարման մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները և ՇՄՆ ստորաբաժանումները: ՌԷԳ հաշվետվությունը ներկայացված դիտողություններով ուղարկվել է լրամշակման: Նախաձեռնողի կողմից ՌԷԳ հաշվետվությունը լրամշակվել է, որի վերաբերյալ պետական մարմիններից և փորձաքննության գործընթացի մյուս մասնակիցներից դիտողություններ չեն եղել: Օրենքով սահմանված կարգով իրականացվել է ծանուցում, որը հրապարակվել է «Առավոտ» օրաթերթում, ինչպես նաև ծանուցումն ուղարկվել է Երևանի քաղաքապետարանին և Արագածոտնի մարզպետարանին՝ բնակչության և շահագրգիռ հանրության շրջանում իրազեկում իրականացնելու նպատակով: Քանի որ Ակադեմիական քաղաքի տարածքը ընդգրկում է ինչպես Երևանի, այնպես էլ Աշտարակ համայնքի Սասունիկ բնակավայրի



տարածքից հողակտորներ, այդ պատճառով հանրային լսումն իրականացվում է 2 ազդակիր համայնքներում: Հարությունյանը ներկաներին տեղեկացրեց, որ առաջարկություններ ունենալու դեպքում կարող են դրանք ներկայացնել բանավոր կամ ուղարկել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի պաշտոնական էլեկտրոնային փոստին և խոսքը փոխանցեց նախաձեռնողի ներկայացուցիչներին:

Ակադեմիական քաղաքի ճարտարապետ Իսահակ Ներսիսյանը ներկայացրեց գլխավոր հատակագծի վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ, խոսեց նախատեսվող կլաստերների՝ տեխնոլոգիական, բժշկական, սպայական և այլն, կանաչապատ տարածքների մասին: Նշեց, որ կառուցապատման ընդհանուր մակերեսը 2 մլն 600 հազ. մ<sup>2</sup> է, որի առաջին փուլը նախատեսվում է ավարտել մինչև 2030 թվականը, իսկ ամբողջ ծրագիրը՝ 2035 թ. հետո: Նա ներկայացրեց Ակադեմիական քաղաքի կառուցման փուլերը, նշեց, որ նախատեսվում է քաղաքի կառուցումը իրականացնել 2 փուլով՝ 1-ինը՝ 2 ենթափուլով: Տարածքում նախատեսված են ուսումնական ու գիտահետազոտական հաստատություններ, հանրակացարաններ և բնակարաններ ուսանողների և դասախոսների համար, մշակույթային և սպորտային կենտրոններ, մարզադահլիճ մոտ 35000 մարդու համար նախատեսված՝ ՌԷՖԱ-ի ստանդարտներին համապատասխան: Նախատեսվում է նաև երկաթգծի և մետրոյի կայարանի կառուցում: Նախատեսվում է ներմուծել էքսպրես ավտոբուսներ, իսկ քաղաքի ներսում շարժը կիրականանա հեծանիվներով և էլեկտրական մեքենաներով: Տարածքը բարեկարգվելու և կանաչապատվելու է:

ՌԷԳ հաշվետվության պատասխանատու Թամարա Նուրիջանյանը ներկայացրեց ՌԷԳ-ի շրջանակներում կատարված աշխատանքները և վերհանված խնդիրները: Նա նշեց, որ բոլոր պետական մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները մասնակցել են ՌԷԳ-ի կազմման գործընթացին և բոլոր մարմինների կողմից առարկություններ չեն եղել: Երևանի գլխավոր հատակագծով, որը հաստատվել է 2024 թվականին Աջափնյակի հողի նպատակային նշանակությունը խառը կառուցապատման է, իսկ Սասունիկի տարածքում կան նաև արոտավայրեր, վարելահողեր, որոնք կառավարության որոշմամբ 2023 թվականին ճանաչվել են գերակա շահ և պետք է օտարվեն: Կառավարության որոշմամբ ստեղծվել է «Ակադեմիական քաղաք» հիմնադրամ, որը մշակել է հստակ հայեցակարգ: Սա Երևանի կառուցապատման ծրագիր է, տարածքը ընտրվել է նրա համար, որ իրենից արժեք չի ներկայացնում, տարածքի մի մասը կառուցապատված է, իսկ մյուս մասը գտնվում է անմխիթար վիճակում: Կուտակված են մեծ թվով թափոններ, կան լքված հանքեր, նաև գործող, տարածքը համարյա զուրկ է բուսականությունից, կենսաբազմազանության, ջրային և հողային ռեսուրսների առումով ոչ մի խնդիր չկա: Նախնական ուսումնասիրություններով



տարածքում որոշ հատվածներ կառուցապատման համար պիտանի չեն և պետք է հետագայում լուծում տրվի այդ տարածքների հետ կապված: Դրական առումով կլուծվի լքված հանքերի հարցը, կիրականացվի ռեկուլտիվացիա, անթրոպոգեն ծագման ճահճային տարածքներ կան, որոնց հարցը ևս պետք է լուծվի: Տարածքում հայտնաբերվել են նաև մշակութային շերտեր, որոնք պետք է պահպանվեն և ինտեգրվեն քաղաքի կառուցապատման մեջ:

Ք. Հարությունյանն ամփոփեց հանրային լսումը և շնորհակալություն հայտնեց ներկաներին:

Հանրային լսմանը մասնակցում էին Երևանի ավագանու անդամներ, «Ակադեմիական քաղաք» հիմնադրամի տնօրենը և աշխատակիցներ, ազդակիր համայնքի բնակիչներ, Աջափնյակ, Աշտարակ համայնքների ներկայացուցիչները, Սասունիկ բնակավայրի բնակիչները, նախաձեռնողի ներկայացուցիչները, «ՆՍԹ արքիթեքչր» ՍՊԸ-ի տնօրենը և այլն:

Հանրային լսման լուսանկարները և լսման ընթացքում բարձրացված հարցերի ամփոփաթեթը հարցուպատասխանի տեսքով կցվում են սույն արձանագրությանը:

## ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

### ք. Երևան

Հարց (մասնակից) - բուհերի կամ կրթության, գիտության նախարարության ներկայացուցիչներ կա՞ն: Հարցս ուղղված է նրանց: Ինձ հուզում է գաղափարը, ինչի հիման վրա է որոշվել քաղաքի հիմնումը գաղափարական առումով խնդիրը լուծված է, թե չէ: Ինչի համար է անհրաժեշտ, ինչի հիման վրա է կառուցվում: Գումարները որտեղից են հատկացվելու քաղաքի կառուցման համար, մեր բյուջեի՞ց:

Պատասխան - 2023 թվականի 1323 Կառավարության որոշում կա, որով կառավարությունը որոշել է:

Հարց - Ճարտարապետների միությունը ինչ կարծիք ունի գաղափարի մասին:

Պատասխան - ոչ մի առարկություն չի եղել, որովհետև գաղափարը վաղուց է քննարկվում:

Հարց - այստեղ խնդիրը նա է, որ արմատը տեղից կտրվում է և դրվում դատարկ տեղում, պատմականությունը կորելու է էդ շենքերի, սա լուրջ խնդիր է մեզ համար, գոնե որոշ բաներ փոխելով համաձայնվեք:

Պատասխան - բոլոր բուհերը ներկա են եղել նախագծի իրականացման սկզբնական փուլերում և ոչ մի առարկություն չի եղել նրանց կողմից:



«Ակադեմիական քաղաք» հիմնադրամի տնօրեն – բոլոր շենք-շինությունները իրենց նշանակությունը չեն կորցնելու և օգտագործվելու են կրթության և գիտության շրջանակներում: Այդ ամեն ինչը ֆիքսված է օրենքով, դրանք բոլորը շարունակելու են մնալ Ակադեմիական քաղաքի ծրագրի շրջանակներում:

Հարց (ավագանու անդամ) – կոնկրետ կոնսերվատորիայի շենքը ինչ է լինելու, որը ունի շատ սպեցիֆիկ բնույթ:

Պատասխան – կոնսերվատորիայի գործունեությունը ներկայացված է լինելու Ակադեմիական քաղաքում որպես երաժշտական կրթության բաղադրիչ իրականացնող բարձրագույն հաստատություն: Մենք միասին աշխատում ենք կոնսերվատորիայի հետ, կոնսերվատորիան ներգրավված է աշխատանքներում և իր կարծիքը հաշվի է առնվելու:

Հարց – կոնսերվատորիայի անձնակազմը ինքն է որոշելու՞ գնա, թե մնա:

Պատասխան – այո, էստեղ կարևորը շենքը չի, այլ իրականացվող որակյալ բարձրագույն կրթական ծրագրեր ունենալն է:

Հարց (մասնակից) – լավ կլիներ, որ քաղաքի կենտրոնը բեռնաթափվեր այլ հաստատությունների հաշվին, քանի որ քաղաքի կենտրոնը արդեն ակադեմիական քաղաք է, ուսանողը գյուղից գալիս է, որ քաղաքի կենտրոնով հիանա: Բնապահպանական առումով խնդիր չկա, բայց առաջարկում եմ այնպես անել, որ ուրիշ կառույցներ լինեն էդտեղ, ոչ բուհերը:

Հարց (Աջափնյակ համայնքի ներկայացուցիչ) – հանքավայրերի ու աղբավայրի փակման նախագիծ արդյո՞ք մշակվում է:

Պատասխան («Նովալ» ՍՊԸ) – պետք է հանքավայրերի տերերի հետ քննարկվի ու որոշում կայացվի, թե ինչպես է իրականացվելու ռեկուլտիվացիան, դա հետագայի հարց է:

Հարց – արդյո՞ք ունենք Հայաստանում հանքարդյունաբերության բնագավառում հաջողված ռեկուլտիվացիայի փորձ, որի ազդեցությունը գնահատվել է:

Պատասխան – այո, ունենք փայլուն օրինակներ և տեխնիկական և կենսաբանական ռեկուլտիվացիայի առումով:

Հարց – հարցս վերաբերում է սանիտարապաշտպանիչ գոտիներին, ներկա պահին գերեզմանատունը ընդլայնվում է և հնարավոր չէ հուղարկավորություններ չանեն, արդյո՞ք պահպանվելու է սանիտարապաշտպանիչ գոտին:

Պատասխան – ներկա պահին սանգոտին պահպանվում է, Երևանի գլխավոր հատակագծով այդ տարածքները ներկայացված են որպես խառը կառուցապատման գոտի և առաջարկը վերաբերում է այն հարցին, որ գերեզմանի սահմանափակում կատարվի դեպի Ակադեմիական



քաղաքի կառուցապատման գոտու կողմը, անհրաժեշտ է պարսպապատել, ծառաշերտեր տնկել և էդ ձևով լուծել խնդիրը:

Հարց – Ակադեմիական քաղաքում նախատեսված էր արհեստական լիճ:

Պատասխան – էս պահին արդեն չէ, դա ծրագրից հանվել է, քանի որ նպատակահարմար չէր:

Հարց- մեկ օրում մոտ 70000 մարդ պետք է երթևեկի դեպի ակադեմիական քաղաք և հակառակը, ճանապարհների մոտեցումների և ծանրաբեռնվածության հարցն ինչպես է լուծվելու:

Պատասխան - դա ուսանողների թիվն է, որոնցից մի մասը մնալու են տեղում, քանի որ լինելու են մոտ 300 բնակարաններ, ուսանողական հանրակացարաններ, մանկապարտեզներ, դպրոցներ, հիվանդանոց և այլն:

Հարց - իսկ կա՞ հաշվարկ ճանապարհների ծանրաբեռնվածության վերաբերյալ, քանի հազար մարդ պետք է տեղաշարժվի օրինակ, Դավթաշենի կամուրջով:

Պատասխան – իտալական «Սիստեմատիկա» ընկերությունն արել է ուսումնասիրություններ թե ինչ ազդեցություն կունենան տրանսպորտային հոսքերը, մի քանի սցենար է մշակվել, շրջանցող կամուրջ և այլն:

Հարց – արդյո՞ք դիտարկվում են հին ճանապարհները, թե նոր լուծումներ կան, նոր կառուցվող ճանապարհներ, որովհետև այդ հանգույցները պրոբլեմատիկ են:

Պատասխան - նախագծով նախատեսված է, որ Ակադեմիական քաղաքի մեջ տրանսպորտ մուտք չգործի, այնտեղ երթևեկությունը նախատեսվում է հեծանիվներով, էլեկտրատրանսպորտով: Օգտագործվելու են թե գոյություն ունեցող ճանապարհները, որոնք բարելավվելու են, թե Երևանի գլխավոր հատակագծով նախատեսված նոր մայրուղին, որը կապվում է Մ 1 մայրուղին Մ 5-ի հետ, բացի այդ օգտագործվելու է նաև երկաթգիծը:

Հարց - բոլորս գիտենք, որ երկաթգիծն ունի մի ուղեգիծ և արդյո՞ք տրանսպորտի բեռնաթափման հիմք կարող է լինել, քանի վագոն պիտի աշխատի, կա՞ն հաշվարկներ կայարանի կառուցման համար, մեկ ուղեգիծ ունեցող երկաթգիծը ինչպես է լուծվում ճանապարհների բեռնաթափման հարցը, և միջազգային խաղեր ընդունելուց ոնց է լուծվելու մարզադաշտ եկող 35000 մարդու տեղաշարժման հարցը՝ Աջափնյակի՝ այս պահին էլ ծանրաբեռնված ճանապարհների պարագայում:

Պատասխան - Ակադեմիական քաղաքը կառուցվելու է փուլերով և 80000 մարդու մասին որ խոսում ենք, դա լինելու է 20 տարի հետո, առաջին փուլում խոսքը գնում է 20000 մարդու մասին, որոնցից 3600 ուսանողներ բնակվելու են այնտեղ: Առաջին փուլում կլինեն արագ տեղափոխման տրանսպորտային միջոցներ, ավտոբուսային գծեր: Հետագայում տվյալ հարցը



կլուծվի նաև մետրոյի միջոցով, որի կառուցումը պարտադիր պայման է: Առաջին փուլի համար ճանապարհները բավարար կլինեն ըստ հաշվարկների: Ստադիոնն էլ առաջին փուլով չի նախատեսվում և 35000 մարդ կարող է լինել տարվա մեջ 1-2 անգամ: Միջազգային փորձն էլ այդպիսին է: Բոլոր փաստաթղթերը հանձնվել են համապատասխան պետական մարմիններին, որոնց կողմից առարկություններ չեն եղել:

Պատասխան – Ձեր հարցադրումը վերաբերվում է ՇՄԱԳ հաշվետվությունների փուլին, այս փուլում բավարարության գնահատում չի լինում:

Հարց – Ես գիտեմ, որ տրանսպորտային հանգույցները պիտի ներառվեն, առանց ճանապարհների մուտքի և ելքի գլխավոր հատակագիծ չի լինում, արդյոք նախնական էսքիզը դիմամիկ փաստաթուղթ է, թե կարող են լինել փոփոխություններ:

Պատասխան – մենք քննարկել ենք համապատասխան մասնագետների հետ, գերմանացիները աշխատել են՝ խորհրդակցելով բոլոր մասնագետների հետ, քաղաքը դիմամիկ զարգացել է ըստ նոր էսքիզների:

Հարց – Երևանում ունենք մի շարք խոշոր կառուցապատումներ, որի արդյունքում հատկապես Աջափնյակ և Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջաններում օդի վիճակը վատթարացել է, արդյո՞ք կատարվել են հեռանկարային հաշվարկներ՝ կապված օդի աղտոտման ավելացման հետ:

Պատասխան – Ձեր հարցը վերաբերում է ՇՄԱԳ հաշվետվություններով ներկայացվող տեխնիկա-տնտեսական ցուցանիշներին, բայց ասեմ, որ շինարարության փուլում օդի աղտոտվածությունը պետք է լինի կանխատեսելի՝ տարբեր միջոցառումների կիրառման արդյունքում: ՌԷԳ հաշվետվությունում նախատեսվել են ընդհանուր միջոցառումներ, տրվել է օդի որակի նախնական վիճակի վերաբերյալ տեղեկություններ և հետագայում էլ ինչ կլինի իրականացման կամ չիրականացման դեպքում: Կանխատեսումների առումով դրական կլինի, եթե իրականացվեն բոլոր միջոցառումները, մասնավոր, որ ներկայում լքված հանքերից, ճահճային տարածքներից ավելի մեծ է վտանգը մարդու առողջության համար:

Հարց – Ինչպես է իրականացվելու ջրահեռացումը, տարածքում կա՞ կոյուղատար:

Պատասխան – տարածքում կան քանդված ջրագծեր, որոնք պետք է ապամոնտաժվեն, որովհետև կառուցվելու է նոր ջրամատակարարման համակարգ, տեղադրվելու են լոկալ կենսաբանական մաքրման կայաններ և ջուրը վերաօգտագործվելու է կանաչապատ տարածքների ոռոգման նպատակով: Հետագայում նախատեսվում է նաև կենտրոնացված մաքրման կայանի կառուցում:

Հարց – Իսկ Հայաստանում էդպիսի փորձ կա՞ մաքրման կայանների տեղադրման:



Պատասխան – այո, իհարկե, Սևանի ափին է կիրառվում, նոր արտադրություններ կան, որոնք ունեն մաքրման կայաններ:

Հարց (ավագանու անդամ) - ուզում եմ հասկանալ ում է ձեռնտու Երևան քաղաքից հեռացնել Ակադեմիական քաղաքը և ներմուծել տարբեր երկրների, օրինակ, Լոնդոնի, Գերմանիայի ծրագրերով ստեղծել մի բան, որը կապ չունի մեր պատմության հետ: Մենք ունենք Ակադեմիական քաղաք Երևան, Գյումրի և Հայաստանի բոլոր քաղաքները:

Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչը նշեց, որ իրենց կողմից ներկայացված դիտողությունները հիմնականում լրամշակվել են, իսկ կանաչապատման նախագծերը հետագայում կներկայացվեն քաղաքապետարանի համաձայնությանը:

## **ք. Աշտարակ**

Հարց (Սարգիս Մխիթարյան) – շատ գովելի ծրագիր է և եթե դա իրագործվի, հետագայում աղբահանությունը ինչպես է կազմակերպվելու:

Պատասխան – այս փուլում կոնկրետ լուծումներ հիմնադրությային փաստաթուղթը չի տալիս, մենք տալիս ենք հեռանկարային լուծումներ, քանի որ խոսքը վերաբերում է գլխավոր հատակագծին, բայց թափոններ բաժնում ներկայացված է թափոնների կառավարումը, որտեղ հստակ նշված է, թե ինչով և ինչպես պետք է առաջնորդվել: Տարածքում կան շատ խնդիրներ կապված շինաղբի, այլ թափոնների հետ, պետք է լուծվեն օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հարց – հնարավոր է՞ թափոնների վերամշակման տարբերակ:

Պատասխան - դեռ պարզ չէ, թե ինչպես կլուծվի այդ հարցը, նախագծման փուլերում, հնարավոր է առաջարկներ լինեն վերամշակման գործարանների կառուցման վերաբերյալ:

Հարց (Բնակիչ) – Սասունիկ վարչական տարածից հնարավոր է՞ կառուցման ընթացքում նախատեսվածից շատ տարածքներ ներառվեն:

Պատասխան – այս պահին նման մտադրություն չկա և տարածքը կլինի սկզբնական տարբերակով: Տարածքի ընդլայնում մոտակա 30 տարում չի նախատեսվում:

Հարց – Պաշտպանության նախկին նախարարության շենքի հատվածը ներառվում է տարածքում:

Պատասխան - ոչ, այդ տարածքներին չի հասնում, Ակադեմիական քաղաքը ներառում է սպայական կլաստեր, որտեղ կտեղակայվեն զինվորական և ոստիկանական կրթական հաստատություններ:

Հարց – ինչպես է լուծվելու ոռոգման հարցը:



